ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N54

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի առաջին կարգի մասնագետ
(ծածկագիրը՝ 3.2-2)

ա) Կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ բաժնի պետի մոտ ընդունելության համար.

զ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին և սպորտային միջոցառումների համակարգմամբ.

է) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

ը) բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է շրջայցեր համայնքային ենթակայության կրթական և մշակութային հիմնարկներ ու կազմակերպություններ, կազմում և բաժնի պետին է ներկայացնում ուսումնասիրություններ տվյալ կազմակերպությունների գործունեության վերաբերյալ.

թ) բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է համայնքային ենթակայության մշակութային և կրթական հաստատությունների գործունեության համար անհրաժեշտ զույքային, շենքային պայմանների և այդ կազմակերպություններում օրենքով սահմանված առողջապահական նորմերի պահպանման վերաբերյալ ուսումնասիրություններ և ներկայացնում համապատասխան առաջարկություններ բաժնի պետին.

ժ) մասնակցում է Հայաստանի Հանրապետության և Վարդենիս համայնքի տոների եւ հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների անցկացման աշխատանքներին.

Առաջին կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն կամ ավարտել է 'Սոցիալական աշխատանք' մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ, ստացել է համապատասխան վկայական.
բ)ունի ՀՀ Սահմանադրության, 'Համայնքային ծառայության մասին', <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> 'Հանրային ծառայության մասին', 'Տեղական ինքնակառավարման մասին', 'Մշակութային օրենսդրության հիմունքների մասին', 'Կրթության մասին', 'Սոցիալական աջակցության մասին', 'Երեխաների իրավունքների մասին', 'Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին', 'Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասի' Հայաստանի Հանրապետության օրենքների աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տիրապետում է սոցիալական աջակցության հայցողի, ինչպես նաև ստացողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն առընչվող ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև ունի տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
գ) տիրապետում է խոցելի խմբերի, երեխաների, տարեցների, համշմանդամություն ունեցող անձանց ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և այլ գենդերային ու սոցիալական խոցելի խմբերի (նրանց ընտանիքների) սոցիալական կարիքների գնահատման, այլ կարիքների բավարարմանն ուղղված անհատական ծրագրերի կազմման մեթոդների ու տեխնիկային առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությունը.
դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2022 թվականի փետրվարի 28-ը ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010515133):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն